Փաստ. անվանումը	Կրեդիտային շարժունության արդյունքների ճանաչման ընթացակարգ
Փաստ. N	ԵՄՀ/ԸԿ-ԿԳ-48-01
Հաստատման ամսաթիվը	03/10/2019
Արձանագրության N	
Հաստատող մարմինը	Գիտական խորհուրդ
Մշակող /պաշտոն, անուն ազգանուն/	Որակի ապահովման կենտրոնի դեկավար/ Մարիամ Ջիլավյան
Ներդրման/իրականացման պատասխանատու	Ամբիոնների վարիչներ

ՓԱՍՏԱԹՂԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոփ. N	Ամսաթիվ	Կատարված փոփոխություն	Անուն, ազգանուն, պաշտոն Ստորագրություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
2. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ 3
3. ՃԱՆԱՉՎՈՂ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԹՎԻ ՀԱՇՎԱՐԿՆ ԸՍՏ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ 4
4. ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԿՈՒՄ 6
5. ՀՈՍՔԱԳԻՐ 7
6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 7
1. Դիմում հայտի ներկայացում 7
2. Դիմում-հայտի հաստատում (պայման) 8
2.1. Դիմում-հայտի վերանայում (5 օրվա ընթացքում) 8
3. Դիմում-հայտի փոխանցում ամբիոն (1 օրվա ընթացքում) 8
4. Փաստաթղթային ուսումնասիրություն (10 օրվա ընթացքում) 8
5. Ամբիոնային նիստի իրականացում, արձանագրության կազմում (3 օրվա ընթացքում) 8
6. Արդյունքների ծանուցում ուսանողին (պայման) 9
6.1. Բողոքարկում (7 օրվա ընթացքում) 9
7. Արդյունքների ամփոփում ուսանողի անհատական ուս. պլանում և դիպլոմի հավելվածում (ընթացիկ) 9
8. Ընթացիկ վերահսկողություն (ընթացիկ) 9

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Եվրասիա միջազգային համալսարանի «Կրեդիտային շարժունության արդյունքների ճանաչման» ընթացակարգի նպատակն է սահմանել ԵՄՀ տարբեր ամբիոններում, ինչպես նաև ՀՀ-ում կամ արտերկրում գտնվող այլ համարժեք հաստատությունում ուսանողների կուտակած կրեդիտների ճանաչման շրջանակներն ու հիմնական սկզբունքները:

1.2. Ընթացակարգի ամբողջական կիրարկման և պատշաճ կերպով կրեդիտների ճանաչման գործընթացը կազմակերպելու համար պատասխանատու է համապատասխան ամբիոնի վարիչը կամ կրթական ծրագրի պատասխանատուն: Գործընթացի մյուս կողմերը պարտավոր են ապահովել որոշման կայացման համար պահանջվող ամբողջական տեղեկատվությունն ու անհրաժեշտ փաստաթղթային հենքը:

1.3. Որակի ապահովման կենտրոնը պարտավորվում է ապահովել կրեդիտային շարժունության թափանցիկ և արդար ընթացակարգերն ու ընտրության չափանիշները, կրեդիտների ճանաչման և փոխանցման, ինչպես նաև ընթացիկ մշտադիտարկման կանոնակարգված և հստակ մեխանիզմներ, որոշումների կայացման հստակ ընթացակարգեր՝ ապահովելով գործընթացի թափանցիկությունը և որակը:

1.4. Ընթացակարգում էական փոփոխություններ և/կամ լրացումներ կարող են կատարվել միայն Գիտական խորհրդի որոշմամբ՝ Խորհրդի անդամների, Ռեկտորի կամ ընթացակարգի պատասխանատուի կողմից: Ընթացակարգը պետք է վերանայվի ԵՄՀ արտաքին և ներքին միջավայրերի փոփոխությանը զուգընթաց, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

1.5. Ընթացակարգը ներքին օգտագործման փաստաթուղթ է և հասանելի է համալսարանի բոլոր աշխատակիցներին և ուսանողներին: Ընթացակարգի և դրա փոփոխությունների հասանելիությունն ապահովում է Որակի ապահովման կենտրոնի ղեկավարը՝ գործող ներքին տեղեկատվական համակարգում և պաշտոնական կայքէջում այն տեղադրելու միջոցով:

1.6. Ընթացակարգն ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի հաստատումից տասն օրացուցային օր հետո, ուժի մեջ մտնելու պահին գործող ներքին իրավական ակտերի համապատասխանեցումը Ընթացակարգի պահանջներին, իրականացվում է դրանց հերթական վերանայման ընթացքում: Ընթացակարգը նախորդ տարբերակ չունի:

2. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

2.1. Ուսանողների շարժունությունը չպետք է հանգեցնի ԵՄՀ կրթական ծրագրով սահմանված ուսման սահմանված ժամկետի կամ ծանրաբեռնվածության ավելացմանը:

2.2. Ուսանողը, նախապես համաձայնեցնելով և կնքելով ուսումնառության պայմանագիր, կարող է կուտակել կրեդիտներ համագործակից արտերկրյա բուհերից, ինչպես նաև ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած Հայաստանյան այլ բուհերից, գիտական կազմակերպություններից և այլն: Համալսարանի կողմից ընդունելի են նաև զանգվածային բաց առցանց դասընթացների

(MOOCs - ԶԲԱԴ) արդյունքները, եթե դրանք նախապես համաձայնեցվել են ամբիոնի հետ և բխում են ուսանողի հիմնական կրթական ծրագրի նպատակներից և վերջնարդյունքներից:

2.3. Շարժունության արդյունքում կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքները չպետք է գերազանցեն համապատասխան որակավորում ստանալու համար անհրաժեշտ ընդհանուր ուսումնական ծանրաբեռնվածության բակալավրի կրթական ծրագրի 25 տոկոսը, մագիստրոսի կրթական ծրագրի 50 տոկոսը և հետազոտողի կրթական ծրագրի 30 տոկոսը:

2.4. Կրեդիտների ճանաչման գործընթացի հիմքում դրվում է կրթական ծրագրի վերջնարդյունքների համադրելիությունը, այլ ոչ թե կոնկրետ դասընթացի բովանդակության համարժեքությունը:

2.5. Միջինստիտուցիոնալ պայմանագրերի շրջանակում իրականացված կրեդիտային շարժունության պարագայում՝ շարժունության ընթացքում ձեռք բերած բոլոր կրեդիտները, համաձայն ուսումնառության պայմանագրի և հավաստված գնահատականների ներդիրի, պետք է անարգել ընդունվեն և արտահայտվեն ուսանողի ՄՈԳ-ի հաշվարկում, դիպլոմի հավելվածում, եթե դրանք չեն հակասում տվյալ կրթական ծրագրի վերջնարդյունքներին:

2.6. Ներքին և արտաքին համատեղ կրթական ծրագրերի իրականացման պարագայում գործընկեր հաստատությունների/ ամբիոնների կողմից կրեդիտների ճանաչման կանոնները ներառող համաձայնեցված շարժունության սխեմաները պետք է ընդունվեն նախապես:

2.7. Հիմնական որակավորումը (Major) ոչ հիմնական որակավորումների (Minor) հետ համադրելու պարագայում՝ արդյունքները պետք է անհապաղ փոխանցվեն առանց որևէ լրացուցիչ աշխատանքի:

2.8. ԵՄՀ-ում և հյուրընկալող հաստատությունում գնահատման համակարգերի և համապատասխան դասընթացների կրեդիտների թվի տարբերությունները չեն կարող կրեդիտների ճանաչման հայտի մերժման հիմք հանդիսանալ:

2.9. Ընթացակարգով չկանխատեսվող կամ չկանոնակարգվող որևէ դեպքի առկայության պարագայում՝ որոշումը կայացվում է ի օգուտ ուսանողի:

3. ՃԱՆԱՉՎՈՂ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ԹՎԻ ՀԱՇՎԱՐԿՆ ԸՍՏ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ

3.1. Եթե կրեդիտների ճանաչման նպատակով ներկայացված դասընթացի անվանումը և կրեդիտների քանակը համընկնում են ԵՄՀ-ում գործող դասընթացի անվանմանը և կրեդիտների քանակին, ապա դասընթացի կրեդիտների ճանաչումը կատարվում է ինքնաբերաբար, առանց հավելյալ աշխատանքի:

3.2. Եթե ճանաչման նպատակով ներկայացված դասընթացի համար կուտակված **կրեդիտների քանակը գերազանցում** է ԵՄՀ-ում համապատասխան դասընթացի համար նախատեսված կրեդիտներին, ապա՝

1. ամբիոնի վարիչի կամ կրթական ծրագրի պատասխանատուի կողմից պետք է որոշվի, թե արդյոք կարող են ավել կրեդիտները հաշվարկվել կրթական ծրագրով նախատեսված մեկ այլ դասընթացի (հիմնական կամ ընտրովի) համար,

2. ճանաչման այլընտրանք չունենալու դեպքում՝ ճանաչվում է միայն այնքան կրեդիտ, որքան նախատեսված է ԵՄՀ-ում գործող համապատասխան կրթական ծրագրի համար:

Օրինակ. Ուսանողը կուտակել է 6 կրեդիտ (A) դասընթացի համար, որին համապատասխանող դասընթացը ԵՄՀ-ում տրամադրում է 3 կրեդիտ (B)՝

- եթե A և B դասընթացների ուսումնառության վերջնարդյունքներում էական տարբերություններ չկան կամ դասընթացը չի համադրվում կրթական ծրագրով նախատեսվող մեկ այլ վերջնարդյունքի հետ, ապա դասընթացի համար միայն 3 կրեդիտ է ճանաչվում,
- եթե ուսանողի ավարտած դասընթացի վերջնարդյունքները ծածկում են ԵՄՀ կրթական ծրագրով նախատեսված մեկ այլ դասընթաց ևս, ապա ամբիոնն իրավասու է բաժանել ճանաչվող կրեդիտները ԵՄՀ մի քանի դասընթացի համար, արդյունքում՝

A դասընթաց (6 ECTS) = B դասընթաց (3 ECTS) + C դասընթաց (3 ECTS)

Գնահատականի հաշվարկ.

A դասընթացի համար վաստակած գնահատականը տարածվում է ճանաչված դասընթացների վրա, օրինակ՝ եթե **A դասընթացի** համար ուսանողը ստացել է 16, ապա **B և C դասընթացների** համար ևս հաշվարկվում է նույն գնահատականը:

3.3. Եթե ճանաչման նպատակով ներկայացված դասընթացի համար կուտակված **կրեդիտների քանակն ավելի քիչ է**, քան ԵՄՀ-ում համապատասխան դասընթացի համար նախատեսված կրեդիտներն են, ապա՝

1. ուսանողը ստանում է կրեդիտներ ԵՄՀ-ում գործող համապատասխան կրթական ծրագրի համար նախատեսված կրեդիտների քանակով, եթե դասընթացների վերջնարդյունքներում էական տարբերություններ չկան,
2. ուսանողը լրացնում է պակասող կրեդիտների քանակը ամբիոնի կողմից որոշվող լրացուցիչ հանձնարարական/ նախագիծ իրականացնելու միջոցով:

Օրինակ. 6 կրեդիտ է պահանջվում ԵՄՀ դասընթացի համար (A), հյուրընկալող բուհում համապատասխան դասընթացի համար շնորվել է 3 կրեդիտ (B)

- Եթե A և B դասընթացների ուսումնառության վերջնարդյունքներում էական տարբերություններ չկան, ապա դասընթացի համար 6 կրեդիտ է տրվում ուսանողին (քիչ հավանական է),
- Այլ պարագայում, ամբիոնի վարիչը/ կրթական ծրագրի պատասխանատուն ուսանողից իրավասու է պահանջնել կատարել լրացուցիչ հանձնարարություն՝ պակասող կրեդիտների աշխատաժամանակով: Օրինակ, եթե նախատեսվում է որևէ ինքնուրույն աշխատանքի իրականացում, ապա դրա ծանրաբեռնվածությունը չպետք է գերազանցի 90 ժամը (= 3 կրեդիտ x 30 ժամ):

Գնահատականի հաշվարկ.

Ուսանողը վաստակել է 14 միավոր B դասընթացի համար (= 3 կրեդիտ), իսկ ԵՄՀ լրացուցիչ հանձ-

նարարականի համար ստացել է 16 միավոր (= 3 կրեդիտ)։

Դասընթացի համար հաշվարկվող վերջնական գնահատականն է 15 միավոր (այժմ՝ 6 կրեդիտի համար), [(14+16)/2]։

3.4. Եթե ԵՄՀ հիմնական դասընթացը, որի համար իրականացվում է կրեդիտների ճանաչումը, պարունակում է որևէ վերջնարդյունք, որը չկա հյուրընկալող բուհի կողմից առաջարկվող դասընթացում, սակայն ԵՄՀ կրթական ծրագրի պարտադիր մաս է կազմում և միայն այդ դասընթացով կարող է ծածկվել, ապա ամբիոնի վարիչը կամ կրթական ծրագրի պատասխանատուն կարող է ճանաչել կրեդիտները՝ տվյալ վերջնարդյունքի ձեռքբերման նպատակով կազմակերպելով լրացուցիչ հանձնարարություն։

3.5. Եթե ուսանողի կողմից հյուրընկալող հաստատությունում/ ամբիոնում ավարտած դասընթացը ստուգարքի տեսքով է եղել և ուսանողը չի գնահատվել, ապա դասընթացի կրեդիտները ճանաչվում են՝ առանց ՄՈԳ-ի հաշվարկում ներառվելու։

3.6. Եթե կրեդիտների ճանաչման նպատակով ներկայացված դասընթացի վերջնարդյունքները ոչ մի կերպ չեն համապատասխանում կրթական ծրագրի վերջնարդյունքներին, ապա դասընթացը և կրեդիտները նշվում են դիպլոմի հավելվածում, սակայն չեն հաշվարկվում ուսանողի ՄՈԳ-ի ձևավորման մեջ։

3.7. Ամբիոնի կողմից կրեդիտների ճանաչման կամ մերժման վերաբերյալ կայացված ցանկացած որոշում արձանագրության մեջ հստակ հիմնավորված պետք է լինի։

4. ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽԱՐԿՈՒՄ

4.1. Ճանաչված կրեդիտների գնահատականները ևս արտացոլվում են վերջնական որակավորման մեջ՝ ներառվելով ուսանողի ՄՈԳ-ի հաշվարկում, բացառությամբ 3.5 և 3.6 կետերի։

4.2. Եթե գնահատման ԵՄՀ և հյուրընկալող համալսարանի համակարգերը նույնն են, ապա ուսանողի գնահատականը նույնությամբ փոխանցվում է՝ առանց լրացուցիչ աշխատանքի։

4.3. Եթե գնահատման համակարգերը տարբեր են, ապա ամբիոնի աշխատակիցները պետք է իրականացնեն գնահատականների փոխարկում։ ԵՄՀ գործընկեր համալսարանների հիմնական մասի կողմից գնահատման համակարգում տառային և թվային գնահատականները արդեն իսկ բաժանված են տոկոսային տիրույթների, հյուրընկալող բուհի կողմից տիրույթները սահմանած չլինելու դեպքում՝ ԵՄՀ-ն է տիրույթները սահմանում՝ գնահատման համակարգին համապատասխան։

4.4. ԵՄՀ-ն ուսանողի գնահատականի փոխակերպման համար օգտագործում է համընկնող տիրույթների միջին միավորը (օրինակ՝ ուսանողի ստացած գնահատականը 75-79% տիրույթում է, ԵՄՀ-ում հիմք է ընդունվում 77%-ը, որն էլ համապատասխանում է տառային նշանակմամբ B+ և թվանշանով 3.3 գնահատականին)։

4.5. Գնահատականի փոխարկման նպատակով կարող են կիրառվել նաև օնլայն գործիքներ։

5. ՀՈՍՔԱԳԻՐ



6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Դիմում հայտի ներկայացում

- Ուսանողը ավարտելով ակադեմիական շարժունությունը դիմում-հայտ է ներկայացնում՝ կրեդիտների ճանաչման նպատակով. https://forms.gle/9eewQ8SWFsgpuVy17

- Ուսանողը դիմումին կցում է նաև համապատասխան դասընթացների առարկայական ծրագրերը (ծրագրերի բացակայության դեպքում՝ ուսումնառության վերջնարդյունքները, նկարագիրը և այլն) և գնահատականների ներդիրը (transcript of records)՝ տվյալ բուհի գնահատման համակարգի նշումով:
- Առանց անհրաժեշտ փաստաթղթային հենքի դիմումին ընթացք չի տրվում:

2. Դիմում-հայտի հաստատում (պայման)

- Ռեգիստրարը ստուգում է դիմում-հայտի ամբողջականությունը: Լրացուցիչ պահանջներ չլինելու դեպքում՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսանողին դիմումի հաստատման վերաբերյալ էլեկտրոնային նամակ է ուղարկվում: Փոփոխությունների անհրաժեշտության դեպքում վերանայման պահանջները ներկայացվում են ուսանողին՝ 2.1 կետ:

2.1. Դիմում-հայտի վերանայում (5 օրվա ընթացքում)

- Ռեգիստրարի կողմից ուսանողին էլեկտրոնային նամակի միջոցով ներկայացվում են դիմում հայտի ամբողջականացման պահանջները, որից հետո այն լրամշակվում է և կրկին ներկայացվում հաստատման:

3. Դիմում-հայտի փոխանցում ամբիոն (1 օրվա ընթացքում)

- Ամբողջական դիմում-հայտը և կից փաստաթղթերը ուղարկվում են համապատասխան ամբիոն՝ հետագա ուսումնասիրությունները կազմակերպելու նպատակով:

4. Փաստաթղթային ուսումնասիրություն (10 օրվա ընթացքում)

- Ամբիոնի վարիչը կամ կրթական ծրագրի պատասխանատուն ուսումնասիրում են ուսանողի դիմում-հայտը և շարժունության վերաբերյալ մյուս փաստաթղթերը՝ դիտարկելով դրանց համադրելիությունը կրթական ծրագրի նպատակների և վերջնարդյունքների հետ:
- Ամբիոնի վարիչը/ կրթական ծրագրի պատասխանատուն կարող է փաստաթղթային ուսումնասիրությանը ներգրավել նաև համապատասխան դասընթացների դասախոսներին:
- Այս փուլում, անհրաժեշտության դեպքում, կարող են կազմակերպվել հանդիպում-քննարկումներ ուսանողի և ամբիոնի վարիչի/ կրթական ծրագրի պատասխանատուի միջև՝ նախորդ կրթության վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար:

5. Ամբիոնային նիստի իրականացում, արձանագրության կազմում (3 օրվա ընթացքում)

- Ուսանողի դիմումի վերաբերյալ որոշման կայացման նպատակով կազմակերպվում է ամբիոնային նիստ, որին պարտադիր ներկա է գտնվում նաև Որակի ապահովման կենտրոնի ներկայացուցիչը:
- Կրեդիտների ճանաչման վերաբերյալ ամբիոնի կայացրած որոշումները իրենց հստակ բացատրություններն ու հիմքերը պետք է ունենան, որոնք ամփոփվում են ամբիոնային նիստի

արձանագրությամբ: Արձանագրության մեջ առնվազն նշվում է.

- Ուսանողի անուն ազգանունը, կրթական ծրագիրը,
- Ճանաչման ներկայացրած դասընթացները և համապատասխան կրեդիտները,
- Ուսումնասիրությունն ու կրթական ծրագրի հետ համադրելիությունն իրականացրած աշխատակիցների տվյալները և նրանց եզրակացությունը,
- Կրեդիտների ճանաչման վերաբերյալ որոշումը՝ հստակ հիմնավորմամբ յուրաքանչյուր դասընթացի համար:

6. Արդյունքների ծանուցում ուսանողին (պայման)

- Կրեդիտների ճանաչման վերաբերյալ որոշումը ռեգիստրարի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվում է ուսանողին, անհրաժեշտության դեպքում կցվում է նաև արձանագրության քաղվածքը:

6.1. Բողոքարկում (7 օրվա ընթացքում)

- Կրեդիտների ճանաչման վերաբերյալ ամբիոնի որոշումը ուսանողը կարող է բողոքարկել մեկշաբաթյա ժամանակահատվածում՝ ներկայացնելով դիմում Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին և կցելով հավելյալ հիմնավորող փաստաթղթեր:
- Բողոքարկմանը համապատասխան կատարվում է կրկնակի ուսումնասիրություն և ամբիոնային նիստ է հրավիրվում, որին կարող է մասնակցել նաև ուսանողը:

7. Արդյունքների ամփոփում ուսանողի անհատական ուս. պլանում և դիպլոմի հավելվածում (ընթացիկ)

- Կրեդիտների ճանաչման վերաբերյալ որոշման համապատասխան StudentM ներքին տեղեկատվական համակարգում ուսանողի անհատական ուսումնական պլանում նշում է կատարվում:
- Ճանաչված դասընթացները իրենց օրիգինալ անվանումներով (և հայերեն թարգմանությամբ) ընդգրկվում են դիպլոմի հավելվածում՝ նշելով այն հաստատությունը, որտեղից դրանք ստացվել են, ինչպես նաև շնորհված կրեդիտներն ու գնահատականները:

8. Ընթացիկ վերահսկողություն (ընթացիկ)

- Որակի պատասխանատուն իրավասու է հետևել կրեդիտների ճանաչման ողջ գործընթացին՝ ապահովելով ընթացակարգի դրույթների ամբողջական կիրարկումն ու լավարկումը: